



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

Հ Ր Ա Մ Ա Ն Ը

28 օգոստոսի 2015 թվականի N.383-Ն

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 15.07.2015  
ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 330-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ թիվ 143-Ն հրամանի պահանջները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. ՀՀ ԷԲՊ նախարարի 15.07.2015թ թիվ 330-Ա հրամանի 1-ին կետով հաստատված Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության ներքին աուդիտի գործունեության կանոնակարգի III բաժնի 15-րդ կետը լրացնել 3-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3.Գնումների համակարգողից գնման ընթացակարգի արձանագրությունը հաստատվելուն, իսկ պատասխանատու ստորաբաժանումներից հանձնման ընդունման արձանագրությունը, իսկ ապրանքների դեպքում նաև պահեստ մուտքագրման օրդերների պատճենները կազմելուն հաջորդող աշխատանքային օրը գրավոր տրամադրեն ներքին աուդիտի ստորաբաժանմանը»:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:



ԵՐՎԱՆԴ ԶԱԽԱՐՅԱՆ